



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՍՏՐԻԱՐԶՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՉ
ՆՐՈՒՍԱԳԷՄԻ

ԽԹ ՏՄԻԻ


1975



ՄԻՈՆ

ԽԹ. ՏԱՐԻ — ՆՈՐՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

1975

Մայիս

Թիւ 5

1975

May

No. 5

SION

VOL. 49

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem

Editor-in-chief: Archbp. Shahe Ajamian Editor: Ara Kalaydjian



St. James Press
Jerusalem



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԳԻՐՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԵՋ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ մը քաղաքակրթութեան մակարդակին իր բնական չափանիշ, տակաւին վերջերս երուպացի հեղինակ մը կ'առաջարկէր որ ընդունէինք տուեալ համայնքի մը անդամներուն որքա՛ն յաճախականութեամբ լուգանք առնելը և կամ սպիրուիլը: Եթէ այս թելադրութիւնը նկատենք, իր կարգին, իր բն. ցուցանիշ այն անկումին՝ զոր երուպական մշակոյթն ու քաղաքակրթութիւնը կ'ապրին, պիտի եզրակացնենք որ մարդկային հետաքրքրութիւնը իրապէ՛ս իջած է կեանքի ամենէն հասարակ — և երբեմն գոհ՛հիլ — իրողութիւններուն, անոնց մէջ փնտռելով կեանքի միակ նպատակն ու իմաստը: Եւ արդարեւ, գիտութեան անհամեմատ յառաջացումին հետ համեմատական անկում չէ՞՞ ապրած միթէ՞ մարդկային մշակոյթը, երբ, ըստ երևոյթին, նախկին բոլոր չափանիշները լքուած են, տեղ տալով նիւթական ըմբռնումներու և ընկալումներու՝ որոնք շատ քիչ — եթէ երբեք — յարարերութիւն ունին ոգեկան կամ բարոյական գեղեցկութիւններու հետ: Արժէքներու գոհ՛հիլացում մը, ի վերջոյ, որ ձայնասփռուի, հեռատեսիլի և թերթերու միջոցաւ այդ անկումին կու տայ ճիւնահիւսի մը հետզհետէ աճող թափըն ու արագութիւնը:

Եւ շատ բնականօրէն, առաջին տուժողը գիրքն է, անոր արուեստը, անոր ոգին, առանց որուն տպուած էջը շատ զիւրաւ կրբնայ վերածուիլ մարդկային միտքն ու նկարագիրը սպաննող թոյնի: Այդ թոյնն է որ այսօր կը ներարկուի միլիոններու, երբ, իր բն. best-seller, հրապարակը կ'ողողուի «գրող»ներու մարդկային բարոյականը քանդող գիրքերով: Արժեչափերու կամաւոր չփութութիւն մը, կատարուած յանուն «մարդկային իրաւունքներու և ազատութեան», ո՛չ մէկ տարբերութիւն կը դնէ գեղեցիկին և տգեղին, բարոյականին և անբարոյին միջև, երբ չարաշահելով հոգեբանական և հոգեվերլուծական գիտութիւնները՝ ջանք կ'ըլլայ բացատրելու — և հետևարար չքմեղելու — մարդկային ամէն արարք, ամէն մտածում: Երբ այսպիսի գիրքեր միլիոններու հասնող տպաքանակով կը տարածուին, անդին՝ արուեստագէտ բանաստեղծներու նիհար գրքոյկները հարիւրով լոյս կը տեսնեն, դատապարտուած մոռացումի և փոշիի:

Թերեւս մեծ ժողովուրդներ, իրենց թուական քանակին իսկ բերումով, կարենան տասնեակ տարիներ դիմանալ մարմինը կրծող այս ախտին. ի՞նչ պիտի ըլլայ սակայն վիճակը փոքր ազգերուն,



որոնց պատնէշները քաղաքակրթութեան ու մշակոյթի անունով եկող ուրականին դիմաց յաճախ այնքան տկար են ու անբաւարար: Մեծերը, յենամ իրենց համեմատարար անդորր անցեալին և դարդացման ու մշակոյթի անընդմէջ զարգացումին, շատ աւելի պատրաստ են դիմագրաւելու այդ փոթորիկը՝ որ կը սպառնայ ամէն ինչ յեղաշրջել: Մինչ փոքրերը, իրենց յարափոփոխ պատմութեամբ և արիւնի տեսական մկրտութեամբ, բեկուած՝ իրենց մշակոյթի աւանդութիւններուն մէջ, աւելի ենթակայ են իյնալու փոթորիկի «աչք»ին մէջ:

Հայուն պատմութիւնը խաղաղութեան քանի մը պահեր միայն կը ճանչնայ, մինչ անոր մշակոյթը անցած է շատ անհաւասար և խորտուրորտ ճամբաներէ: Մեր մշակոյթը չընդմիջուող շղթայ մը չէ, այլ ընդհակառակը, կը նմանի խորշակահաւար պարտէզի մը, որ սխրալի է ոչ այնքան դիմացած իր հատուկենա ծաղիկներով, որքան անոնց՝ մեղի տուած կարելիութիւններուն գիտակցութեամբ:

Սակայն դարերէն եկող այդ քիչը մեր միակ պատնէշն է, մեր միակ ունեցածը, որո՞վ միայն կրնանք մեր դիմագիծը պահել ազգերու և քաղաքակրթութիւններու ներկայ թոհուրոհին մէջ: Անիկա լեզուն է, եկեղեցին, երգը, և գիրքը:

Հայր, հակառակ տիրող կարծիքին, ընթերցասէր է. վկայ՝ երկու տասնեակ հազար հնօրեայ ձեռագիրները, ասուոր կորուստներէ ետք. վկայ՝ 1512էն սկսած տպագրական մեր հիանալի գործունէութիւնը. վկայ՝ արտասահմանի բազմաթիւ տպարանները, իրենց այնքան արդիւնաւոր աշխատանքով: Եւ վերջապէս, վկայ՝ Հայաստանի ժողովուրդը, որուն համար հայ գիրքը տասնեակ հազար օրինակներով կը հրատարակուի: Այսպէս ըլլալով հանդերձ պարագան, պէտք է հարց տալ թէ հայ գիրքը իրապէս կը կատարէ՞ դերը զոր իրեն տուած ենք, որ իրն է և իրը պէտք է ըլլայ: Այսինքն, մէկ կողմէ՝ հայ գրականութիւնը և գրողը կրնա՞ն գոհացնել ընթերցողը, և միւս կողմէ՝ այդ ընթերցողը որքանո՞վ կապուած է մեր գրականութեան ու որքանո՞վ օտարէն եկածին:

Ընթերցանութեան գործիքը լեզուն է. եթէ այդ գիտութիւնը կը պակսի, որոչ է որ ընթերցողներու թիւն ալ նուազ պիտի ըլլայ տուեալ որևէ համայնքէ մը ներս: Հայկական դպրոցները արտասահմանի մէջ կէս դարէ աւելի է որ հայերէնը կ'ուսուցանեն, և ներկայիս աւելի քան երրեք կենսունակ են ու իրենց առջև գործունէութեան խանդավառող հեռանկարներ ունին: Հետևարար, հաւանական ընթերցողներու բազմութիւն մը կայ այսօր, որ հայերէն գիրքի պահանջը ունի: Իսկ այդ պահանջքին կարելի է գոհացում տալ երկու գլխաւոր կերպերով. վերահրատարակելով 1850-1920 չըջանին ինկող գրական ստեղծագործութիւնները, և տպագրութեան տալով արտասահմանի գրողներու ժամանակակից երկերը:

Առաջինը մեզ կը հետաքրքրէ իրրև հանդիսարանը անցեալ դարու հայ կեանքին՝ իր ուրախութիւններով ու վիշտերով, իր ա-

ոօրեայ մտահոգութիւններով և ապագայի ձգտումներով: Եւ տա-
 կաւին, այդ գրականութիւնը աւելի քան յաջող իրագործում մըն
 է, մանաւանդ երբ նկատի առնուին պայմանները որոնց մէջ ան
 կեանքի բերուեցաւ: Անիկա ազգային հպարտութեան ոտբաւոր
 դասանակ մըն է: Անոր գլխաւոր ստեղծագործութիւնները, արեւ-
 լահայ թէ արեւմտահայ, այսօր ևս այնքան ներուժ են և խանդավա-
 ռող՝ որքան էին դար մը կամ կէս դար առաջ: Եթէ ներկայ օրերու
 ընթերցողը այդ գրականութեան մէջ իր անցեայր և իր հարերը
 կը գտնէ, ապա արտասահմանի գրողներու երկերուն մէջ իր յուսա-
 ւոր կամ մութ առօրեան է որ կը պատկերացուի: Հակառակ բոլոր
 ուրացումներուն, արտասահմանը իրեն յատուկ գրականութիւնը
 ունի, իր մասնաւոր նկարագրով, ըմբռնումներով և ձգտումներով:
 Ան իր մէջ քանի մը սերունդ գրողներ կը հաշուէ. եթէ առաջին սե-
 րունդի մեծերը հետզհետէ կ'անհետանան, միւս կողմէ ծնունդ
 կ'առնէ բոլորովին երիտասարդ գրողներու խումբ մը, որ թէև ձևի
 նորութիւններ կը փնտռէ, որոնումներ կը կատարէ, այլ խորքով կը
 մնայ իրապէս ազգային, նախորդներումտահոգութիւններով: Հի-
 նին և նորին միջև երկարող այդ թեյն է որ կապ մը կը ստեղծէ այս-
 օրուան գրողին և ընթերցողին միջև. և այս վերջինը, որքան ալ
 ծանօթ ըլլայ օտար գրականութիւններուն և արդի ըմբռնումնե-
 րուն, դարձեալ պիտի վերադառնայ իր ազգային գրականութեան,
 որովհետև հոն պիտի կարենայ գտնել ինչ որ իր արիւնը իրեն փրն-
 տուել կու տայ, և ինչ որ չի կրնար առնել օտարէն, որքան ալ որ
 այս վերջինին ունեցածը բարձր ըլլայ և կամ առիւնքնող: Ինչպէս
 Հայաստանի նոյնպէս և արտասահմանի ներկայ գրողը զարգացած
 է, ընդհանրապէս համալսարանական, ունի կեանքի լայն աչ-
 խարհայեացք, և իր ստեղծագործութիւնն ալ հետեւաբար ամրա-
 հիմ է: Ու հակառակ բոլոր դժուարութիւններուն և օտարացման
 միշտ ներկայ սպառնալիքին, հայ գրականութիւնը կենսունակ է
 արտասահմանի մէջ, ու, ինչպէս կը շեշտէինք, հայ գիրքը մեր ա-
 մենէն զօրաւոր դէնքերէն մին է մաքառելու համար օտարէն եկող
 անընդունելի և մերժելի ազգեցութիւններու դէմ:

Ա. Գ.



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Նորին Ամենապատուութիւն
Տ. եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանին
Պատրիարքին Երուսաղէմի Հայոց
Երուսաղէմ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»

Ամենապատիւ եղբայր Մեր.

Մեզի համար մեծ ուրախութիւն է մեր Փրկչի Քրիստոսի հրաշալի Յարութեան աւետիսով՝ Ձերդ Սրբազնութեան և ձեր Սուրբ Աթոռին բերելու Մեր եղբայրական սիրոյ ողջոյնը և ձեր ուխտապահ միաբանութեան ու հաւատացեալ ժողովուրդին՝ մեր ամենաբարի մաղթանքներն ու հայրական օրհնութիւնը:

Սուրբ յարութեան լոյսով անգամ մը ևս թող ամրապընդուի քրիստոնէական մեր յոյսը թէ երկնային ողորմութեամբ պիտի քազաւորէ վերջապէս խաղաղութիւնը մարդկային աշխարհի վրայ և պիտի բացուի նանապարհը հոգիներու փրկութեան:

«Զի Աստուած որ ասաց ի խաւարէ լոյս ծագել. որ և ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի» (Բ Կորնթ. Դ 6):

Փառք յարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Ջ Գ Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

Սուրբ Զատիկ, 1975 թ.

Վատիկան

Ն. Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի
Երուսաղէմ

Շնորհակալ եմք մեր Տիրոջ հրաշափառ Յարութեան մեծ տօնին առիթով Ձերդ Ամենապատուութեան դրկած ջերմ մաղ-
թանքներուն համար:

Ձերդ Սրբազնութեան կը յայտնենք մեր անկեղծ ողջոյննե-
րը: Թող յարուցեալ մեր Տէրը շարունակէ իր շնորհքին մէջ սլահել
Ձերդ Ամենապատուութիւնն ու Ձեր հաւատացեալ հօտը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս
ՊԱՊ ՊՕՂՈՍ Զ

LAMBETH PALACE, SE1 7JU

EASTER 1975

Your Holiness,

Dear Brother in Christ

*"Fear not ye: for I know that ye seek Jesus, which was
crucified. He is not here: for He is risen".*

(St. Matthew 28: 5-6)

With these words of comfort, the angel of the Lord greeted the women who were looking for Jesus on the first Easter Day. They who were looking for their dead Master fearfully and sadly, learned with joy that He is alive. "He is risen indeed".

At this Eastertide we greet you Your Holiness with similar words of joy and comfort. Jesus lives. Death is swallowed up in victory.

Jesus is no longer "here" on this earth in human flesh, but He is with us in His mystical Body. Many do not know Him. Many do not seek Him. But to those who seek Him believing, He comes. "Seek and ye shall find. Knock and it shall be opened unto you". (St. Luke 11:9).

May our risen Lord strengthen our faith in Him, and may we open our hearts and lives to Him that He may dwell in us.

We greet you warmly in His love.

Your Holiness's affectionate Brother in Christ,

DONALD CANTUAR

Archbishop of Canterbury

Primate of All England and Metropolitan

His Holiness Yeghishe Derderian.

ՁԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ



Մայիս 3-5 արտակարգ եռուզեռի օրեր էին Ս. Յակոբեանց Միարանութեան, հայ համայնքին և հաւատացեալ ուխտաւորներուն համար: Անոնք կը պատրաստուէին միասնաբար ղիմաւորելու Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը՝ չարչարանքի, խաչելութեան ու թաղման խորհրդաւոր արարողութիւններէն ետք:

Շարաթ, 3 Մայիս 1975, առտուն, ըստ աւանդութեան, Ս. Յարութեան Տաճարի դրան Արար պահակը Տաճարի բանալին կը բերէ ու կը յանձնէ վանական իշխանութեան. քիչ ետք, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նաղարեանի ղլխաւորութեամբ թափօր մը կը կազմուի որ Հայոց Վանքէն ընթացք առնելով կը յառաջանայ Երուսաղէմի փողոցներէն: Աւագ Թարգմանը բարձր բռնած է Տաճարին բանալին:

Հաննելով Ս. Յարութեան Տաճար, համաձայն տարիներու սովորութեան՝ Աւագ Թարգմանը բանալին կը յանձնէ ղոնապանին, որ դուրսի կողմէն ղուռը կը բանայ, մինչ ներսէն նոյնը կ'ընէ հայ լուսարարը: Այս գեղեցիկ և տպաւորիչ աւանդական արարողութիւնէն ետք, Հայ, Յոյն, Ղպտի, Ասորի հաւատացեալներ և ուխտաւորներ Տաճարէն ներս կը մտնեն երկիւղածօրէն, իւրաքանչիւրը իր բաժինը երթալու համար: Բազմաճարիւր հայեր փութացած էին Ս. Յարութիւն, հայկական բաժինը լեցնելու և ականատեսն ու վկան լուրջ լոյսի ու Յարութեան հողեղծայլ և տպաւորիչ արարողութեան:

Ժամը 11ին, Ս. Յակոբեանց Մայրավանքի զանգերը կը ղողանջեն, և Ամեն. Պատրիարք Ս. Հայրը շրջապատուած Միարան Հայրերով, բարապաններու և Աւագ Թարգմանին առաջնորդութեամբ, հանդիսական թափօրով մուտք կը դործէ Ս. Յարութեան Տաճար, ուր, իր ուխտն ու աղօթքը կատարելէ ետք Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, կ'երթայ հանդիլի Հայոց Տեսչարանը՝ սպասելով «Լուսաւորնայ»ի և յարակից արարողութիւններուն:

Քիչ ետք Ղպտիներու և Ասորիներու լուսահաններն ու լուսակիրները կու գան Ամեն. Պատրիարք Ս. Հօր օրհնութիւնը առնելու, մինչ միւս կողմէ Հայերու և Յոյներու լուսահաններու, միարանութիւններու և պետական ներկայացուցիչներու ներկայութեան կը կնքուի Քրիստոսի Ս. Գերեզմանը և իւրաքանչիւր համայնքէ վարդապետ մը պահակ կը կանգնի դրան մօտ:

Կէսօրուան մօտ ընթացք կ'առնէ Յոյներու թափօրը, որու աւարտին, մեր լուսահանը՝ Հոգշ. Տ. Կիրեղ Մ. Վրդ. Գարիկեան, երկու սարկաւազներու ընկերակցութեամբ կը միանայ անոնց և Յոյներու լուսահան՝ Գերշ. Տ. Դլաւտիոս Եպիսկոպոսի հետ կը մտնէ Քրիստոսի Ս. Գերեզմանը: Կարճ աղօթ-

քէ մը ետք, անոնք մտի խուրձերը կը վառեն ու Ս. Գերեզմանի կողմնակի երկու պատուհանիկներէն դուրս կը կարկառեն : Մեր լուսակիրները Ս. Լոյսը ակնթարթի մը մէջ կը հասցնեն վերնատուն՝ Ամեն . Պատրիարք Ս. Հօր, որ պատշգամէն կ'օրհնէ խնուած հաւատացեալ ժողովուրդը : Նոյն պահուն կը սկսին զօղանջել Տաճարի զանգերն ու հնչել կոչնակները, մինչ մեր լուսահանը ուսամբարձ կ'առաջնորդուի Հայոց Տեսչարան, ուր կը զգեստաւորուի և եպիսկոպոսական խոյր ի դուրս կը նախադահէ Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ երազարձ թափօրին : Մեղի կը հետևին նաև Ղպտիններու և Ասորիներու թափօրները :

Աւարտին, Միաբանութիւնը, Հայկական երեք Միութիւններու արիններու և արենոյշներու ու իրենց փողերախումբերուն առաջնորդութեամբ Վանք կը վերադառնայ . Դաւթի բերդին դիմաց Ամեն . Պատրիարք Սրբազան Հայրն ու լուսահան Հայր Սուրբը կը զգեստաւորուին ու դպիրներու «Քրիստոս յարեալ» շարականին երգեցողութեամբ դէպի մայրավանք կը յառաջանան : Ս. Յակոբեանց Տաճարին մէջ ընթերցուած Յարութեան Աւետարանէն ետք կը փակուի այս փառաշուք հանդիսութիւնը . Միաբանութիւնն ու ժողովուրդը կ'երթան կարճ դադար մը անելու ու քիչ ետք կրկին վերադառնալու Ս. Յակոբ, ուր կը պաշտուի ձրադալոյցի արարողութիւնը : Ապա, Ս. Յակոբի Աւագ Սեղանին վրայ օրուան խորհրդաւոր Ս. Պատարագը կը մատուցանէ Հոգչ . Տ. Վրդէն Վրդ . Այբաղեան :

Ս. Յարութեան Հայկական բաժնին մէջ ալ ձրադալոյցի պատարագ կը մատուցուի Հոգչ . Տ. Ասպետ Արդ . Պալեանի կողմէ : Երկու սրբափայերուն մէջ րազմաթիւ հաւատացեալներ հաղորդութեան Ս. Խորհուրդին մասնակից կը դառնան, Մեծ Պահքի ու ապաշխարութեան երկար օրերուն յաջորդող Քրիստոսի հրաշափառ Յարութեան դադափարով զօրացած :

Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուող ձրադալոյցի պատարագէն ետք, Հոգչ . Տ. Հայկասեր Վրդ . Պայրամեանի հանդիսապետութեամբ տեղի կ'ունենայ Ս. Չառկի նախատօնակը, որմէ ետք «Այսօր յարեալ ի մեռելոց» շարականի երգեցողութեամբ Միաբան Հայրերն ու ժառանգաւոր սաները Վանքի սեղանատուն կը բարձրանան, ուր Աւետարանի ընթերցումէն ետք, զեղեցիկ աւանդութեան համաձայն, իւրաքանչիւրին մէկական ներկուած հակիթ կը բաժնուի :




Կիրակի, 4 Մայիս 1975 : Ս. Չառկի Յարութեան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Կէս գիշերին Միաբանութիւնն ու ժողովուրդը Մայր Տաճարի զանգերու զօղանջին հետ ճամբայ կ'ելլեն դէպի Ս. Յարութիւն, հանդիսապետութեամբ Գերշ . Տ. Շահէ Աբբեպա . Աճէմեանի : Տաճարի Հայկական բաժնի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ կը պաշտուի գիշերային ժամերգութիւնը, ապա Միաբանութիւնը զգեստաւորուած ու թափօր կազմած կը բարձրանայ Քրիստոսի յոյս Գերեզմանի շրջափակը, «հարց»ի երգեցողութեամբ . այս թափօրին դարձեալ կու դան միանալ Ղպտիններն ու Ասորիները : Երազարձ թափօրի ընթացքին կը կատարուի առաւօտեան ժամերգութիւնը և «Իւղարերից Աւետարան»ը հանդիսապետ Գերշ . Սրբազան Հայրը կը կարգայ Քրիստոսի Գերեզմանին առջև : Ժամերգութեանց ընթացքին նաև կը կատարուի «Անդաստան» ու աւարտին՝ «Պաշի քօ Քրիստոս» շարականի երգեցողութիւն ու խնկարկութիւն յարուցեալ Քրիստոսի Գերեզմանին շուրջ :

Կարճ դադարէ մը ետք, առաւօտեան ժամը Տին, Քրիստոսի Սուրբ Գեղեղմանին վրայ Գերշ. Տ. Շաշէ Արքեպս. Աճէմեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը կը մատուցանէ ու կը քարոզէ «Ձէ աստ, այլ յարեալ» բնարանով, ներկայացնելով Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը որպէս հիմնաքար քրիստոնէական հաւատքին: Բազմաթիւ հաւատացեալներ ներկայ կ'ըլլան սպասարային՝ որ նաև կը ձայնասփռուի խրայէլեան ուստիոկայանէն:

Արարողութիւններէն ետք, Հայ Երիտասարդաց Միութեան արիներու, արենայներու և փողերախումբին առաջնորդութեամբ, Միարանութիւնն ու հաւատացեալները մայրավանք կը վերադառնան ու Պատրիարքարան բարձրանալով, Ամեն. Պատրիարք Ս. Հայրէն կ'ընդունին Քրիստոսի Յարութեան աւետիսն ու շնորհաւորութիւնները:

Կէսօրէ ետք, Վանքի մեծ բակը մեծ եռուզեռ կայ: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, շրջապատուած Միարան Հայրերով, շրջափակ կ'իջնէ՝ նախագահելու «Մեծ անդաստան»ին, որու ընթացքին ընթերցումներ կը կատարուին Աւետարաններէն և Առաքելներու թուղթերէն: Ապա Մայր Տաճարի դաւիթին մէջ հոգեհանգստեան յատուկ պաշտօն կը մատուցուի երախտաւոր սպարիարքներու հոգիներու խաղաղութեան համար:




Երկուշաբթի, 5 Մայիս 1975: Յիշատակ մեռելոց: Այսօր Ս. Յակոբեանց Մայր Տաճարը բոլորովին տարբեր երևոյթ մը զգեցած է. մօտաւորապէս հինգ հարիւր կանթեղ, մոմ ու ջահ կը լուսաւորեն դայն: Աւագ Սեղանին վրայ հանդիսաւոր սուրբ և անմահ Պատարագ կը մատուցանէ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որուն կը սպասարկեն ու կը խնկարկեն Միարան Հայրեր ու բարեկրթօն սարկաւազներ: Նորին Ամենապատուութիւնը կը քարոզէ՝ «Ճանաչել զնա և զօրութիւն Յարութեան նորա» բնարանով, վեր հանելով Քրիստոսի Յարութեան ստուգութիւնը: Բազմաթիւ հաւատացեալներ Պատարագի ընթացքին կը մօտենան խորանին՝ Ամեն. Պատրիարք Ս. Հօր աջէն ընդունելու Ս. Հաղորդութիւնը:

Պատարագէն ետք Միարան Հայրեր զգեստաւորուած ու սուրբերու մասունքներ ի ձեռին, իսկ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ամպհոփանիի տակ Քրիստոսի խաչափայտի մասունքով, Մայր Տաճարին մէջ երազարձ թափօր կը կատարեն: Ապա նորին Ամենապատուութիւնը Աւագ Խորան կը բարձրանայ, մինչ Միարան Հայրեր փոքր տառանին, իսկ դպիրներ մեծ տառանին մէջ ծուկի կու գան և ներկայ հաւատացեալ ժողովուրդին և ուխտաւորներուն համար կ'երգուի «Ճանապարհ»ը և «Տէր ողորմեա»ն:

Այս հոգեպարար արարողութենէն ետք «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռի շարահանի երգեցողութեամբ, Միարանութիւնը և ժողովուրդը Պատրիարքարանի դահլիճը կը բարձրանան, ուր Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հայրը ներկաներուն Զատիկը կը շնորհաւորէ, կ'օրհնէ զանոնք ու Ս. Պատարագի օրհնուած նշխար կը բաժնէ, բսելով:

«Ձեզ և մեզ մեծ աւետիս.
Քրիստոս յարեալ ի մեռելոց»:



ՈՒՈՒՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՒ ՊԵՏ Ն. ԱՄԵՆ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

Սուրբ Երկրի դարաւոր և հարուստ պատմութեան վրայ նոր ու յիշատակելի էջ մը ևս աւելցաւ, Երուսաղէմ այցելութեամբը Ռուսէն Եկեղեցի պետ Նորին Ամենապատուութիւն Ժուստինիան Պատրիարքի, որ քաղաքս մնաց 21 Մայիսէն մինչև 30 Մայիս:

Սրբազան Պատրիարքը Պեն-Կուրիօն օղակայան ժամանեց Զորեքարթի, 21 Մայիս 1975, կէսօրէ կտք: Ան իր շքախումբին և հիւրընկալ Յունաց Պատրիարքարանի Միաբանութեան անդամներուն ուղեկցութեամբ Երուսաղէմ ժամանեց Երեկոյեան և Յոսպէի դրան մուտքին ընդունուեցաւ պետական, հիւպատոսական և կրօնական ներկայացուցիչներու կողմէ:

Ս. Աթոռիս կողմէ ներկայ էին հիւրաբար Երուսաղէմ գտնուող Աւտարալիոյ Հայոց Առաջնորդ Գեբշ. Տ. Գարեղին Եպս. Գաղանճեան և Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորդ Վրդ. Նազարեան:

Շարաթ, 24 Մայիս, կէսօրին, Ն. Ամեն. Ժուստինիան Ռուսմանիոյ Պատրիարքը իր շքախումբի անդամներով պաշտօնական այցելութիւն մը տուաւ Պատրիարք Ս. Հօր:

Միաբանութեան հօգեչնորհ հայրերն ու ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի սաները Վանքի մուտքին դիմաւորեցին Ամենապատու հիւրը և «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին Պատրիարքարան, սանդուխներուն վրայ ընդունուելով Դիւանապետ Գեբշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս Աճէմեանի կողմէ:

Պատրիարքարանի մուտքին Ն. Ամեն. Ժուստինիան ջերմօրէն ընդունուեցաւ Պատրիարք Ս. Հօր կողմէ: Ապա, լուսադարձ Դահլիճին մէջ կատարուած ընդունելութեան միջոցին բարի գալուստի խօսք տոնելով, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը անդրադարձաւ Հայ և Ռուսէն դարաւոր Եկեղեցիներու փոխ-

յարարեբունքեան, և բարձր դնահատեց Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքի դե-
րը՝ Ռուսկէն Եկեղեցիի պայծառութեան և կազմակերպութիւն համար:

Իր պատասխանին մէջ, Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարք շնորհակա-
լութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան և Ռուսկէն Եկեղեցիին նկատմամբ ար-
տայայտուած գեղեցիկ խօսքերուն համար: Ան անդրադարձաւ Հայ Ժողովուր-
դի անցեալին, և յիշեց թէ ինչպէ՛ս Ռուսկէն Ժողովուրդը Մեծ Եղեռնէն առջ-
ու ևտք սիրով ընդունած է Հայերը և անոնց ընծայած ամէն ազատութիւն ու
ասպնջականութիւն:



Ս. Գլխադրի մէջ իր աղօթքէն ետք,
Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարք կ'օրհնէ ներկաները:

Ազա, Հիւրասիրութենէ և մտերմիկ խօսակցութենէ մը Լաբ, Ամեն-
Պատրիարք Ս. Հայրը բնկերացաւ Ն. Ամեն. Ժուտարինիան Պատրիարքին մինչև
Վանքի աւազ դուռը, ուր երկու Ամենապատիւ Սրբազանները ողջագուրուեցան
և հրաժեշտ առին իրարմէ :

Կիրակի, 25 Մայիս, Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և Դիւանապետ
Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս ներկայ եղան Ինթըրքոնթինէնթըլ պանդոկին
մէջ Յունաց Պատրիարք Ն. Ամեն. Պենետիքթոսի կողմէ ի պատիւ Սրբազան
Հիւրին տրուած ճաշկերոյթին :

Իսկ Երեքշաբթի, 27 Մայիս, Երեկոյեան Ժամը 6-8, Կրօնից Նախարար
Ն. Վսեմ. Իցհաբ Ռաֆայէլի կողմէ Երուսաղէմի Թատրոնին մէջ ի պատիւ Ն.
Ամեն. Ժուտարինիան Պատրիարքին տրուած ընդունելութեան Ս. Աթոռիս կողմէ
ներկայ եղան Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարիկեան, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ.
Նազարեան և Պրն. Գ. Հինգլեան :

Ն. Ամեն. Ժուտարինիանի Երուսաղէմ այցելութեան զլիաւոր նպատակ-
ներէն մին էր օծել Ս. Քաղաքիս նորակառոյց Ռումէն զեղեցիկ Եկեղեցին : Տը-
պաւորիչ այդ արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 28 Մայիս, կէսօ-
րէ առաջ, Ս. Պատարազի ընթացքին, ի ներկայութեան պետական և կրօնական
ներկայացուցիչներու և հաւատացեալներու : Ս. Աթոռիս կողմէ ներկայ էին
Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարիկեան և Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան :



Ս. Աթոռիս Ամեն. Գահակալը Սրբազան Հիւրին կը նուիրէ Ռումէն
քանկագին Աւետարան մը պարունակող սատափեայ տուփը :

* * *

Հինգշաբթի, 29 Մայիս, երեկոյան, Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը շքեղ ընդունելութեամբ մը պատուեց Ռուսէն Եկեղեցիի պետ Ամենապատիւ Տ. Ժուստինիան Պատրիարքը:

Երեկոյան ժամը Նին Ամենապատիւ Հիւրը իր Հետևորդներով և Յոյն Պատրիարքարանի ներկայացուցիչ եպիսկոպոսներով Ս. Յակոբեանց Վանքի աւագ դրան առջև դիմաւորուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի, միաբան Հայրերու, Ժառանգաւոր սաներու և հաւատացեալներու կողմէ և «Հրաշափառ»-ով առաջնորդուեցաւ Տաճար, որուն մուտքէն բնորոշուեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր կողմէ: Ս. Գլխադիրի սրբավայրին մէջ իր ազօթքը ընելէ ետք, Ամեն. Հիւրը թափօրով և շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր հրաւիրուած էին նաև կրօնական համայնքներու և պետական ու Հայ համայնքի ներկայացուցիչները: Ներկաներուն մէջ էին Կրօնից Նախարար Ն. Վսեմ. Պրն. Իցհաք Ռաֆայէլ, Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Ն. Վսեմ. Պրն. Ռաֆայէլ Լէվի, Երուսաղէմի Ոստիկանապետ Հայնց Պրայթըն-Փելտ, Կրօնից Նախարարութեան քրիստոնեայ համայնքներու Գործերու Գրասենեակի վարիչ Պրն. Ռէօօլէն Քական, ինչպէս նաև Հիւպատոսական լրիւ կազմը:

Պատրիարքարանի լուսազարդ շքեղ դահլիճին կեդրոնը պատրաստուած էր պատուոյ ճոխ սեղան մը, որ ներկաներուն հիացումին առարկան դարձաւ:

Ընդունելութեան միջոցին մեծ խանդավառութիւն ստեղծեց ժամանուամբ Երուսաղէմի Յոյն Պատրիարք Ն. Ամեն. Պենետիքթոսի, որ հակառակ իր աւելոր տարիքին և տկար առողջութեան՝ փափաքեր էր պատուել Ռուսէն Եկեղեցւոյ Ամեն. Պետն ու Հայ Պատրիարքութիւնը:

Պատուասիրութեան կէսին, խօսք առաւ Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և անգլերէն ուղերձով մը վերստին բարի դալուստ մաղթեց Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքին, և կրկին անգամ շեշտեց Հայ և Ռուսէն Եկեղեցիներու սերտ յարաբերութիւնն ու անոնց միջև գոյութիւն ունեցող եղբայրական ջերմ սէրը: Պատրիարք Ս. Հօր խօսքերը տեղւոյն վրայ ուսմաներէնի թարգմանուեցան: Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքի նոյնքան սիրալիր արտայայտութիւններէն ետք, երկու Սրբազան Պատրիարքները նուէրներ փոխանակեցին: Ն. Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարք Սրբազան Հիւրին ընծայեց սատարեայ Հիանալի տուփ մը որուն մէջ կը գտնուէր Ռուսմաներէն լեզուով Աւետարան մը. տուփին կախարիչին մեծ ճարտարութեամբ և հարազատութեամբ փորագրուած էր Ռուսէն Ամեն. Պատրիարքին դիմաքանդակը: Ռուսէն Պատրիարքի շքախումբի անդամներուն ընծայուեցան ձեռաց խաչեր և Երուսաղէմ ներկայացնող սատարեայ պատկերներ: Իսկ Ամեն. Հիւրը Ս. Յակոբեանց Տաճարին համար նուիրեց թանկագին կանթեղ մը, իսկ Ն. Ամենապատուութեան և Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսին՝ ձեռաց խաչեր և պանակէնք, ինչպէս նաև Երուսաղէմ իր այցելութեան առթիւ պատրաստուած մետալներ:

Ժամը 7-30ին Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և միաբան Հայրերն ու ներկաները ողջերթ մաղթեցին Ժուստինիան Պատրիարքի, որուն ընկերացան մինչև Վանքի աւագ մուտքը: Սրբազան Հիւրը կրկին անգամ իր ուրախութիւնն

ու գոհունակութիւնը յայտնելէ ետք Ս. Աթոռիս զահակալին՝ ընծայուած Հիանալի ընդունելութեան համար, հրաժեշտ առաւ բոլորէն և իր շքախումբի անգամներով վերադարձաւ իր հանդատալայրը :

Ն. Ամեն. Պենետիքթոս Պատրիարք ժամանակ մը ևս մնաց Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութեան, միարան հայրերուն և ներկաներուն հետ հաճելի ու մտերմիկ զրոյց ունեցաւ :

Ան հրաժեշտ առաւ ժամը 8-30ին, և Վանքի աւազ դրան մէջ կրկին անգամ Պատրիարք Ս. Հօր հետ ողջադուրուելէ ետք, բարձր և գոհ տրամադրութեամբ մեկնեցաւ՝ իր միարանութեան անդամներուն ընկերակցութեամբ :

* * *

Ուրբաթ, 30 Մայիս, առաւօտեան, Պատրիարքարանիս կողմէ Ռումէն Եկեղեցւոյ պետ Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքին ողջութիւն համար Լիախի օգակայան կը դտնուէր Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս, որ բարի երթի անկեղծ և ջերմ խօսքերով հանդէս եկաւ :

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ

Ահաւասիկ ղնեմք ի Սիովն վէմ ընտիր, . . .

և որ ի նա հաւատացէ մի ամաչեցէ

(Ա. Պետրոս Բ. 6) :

ԱՅՍ ղեղեցիկ պատգամը որ կու դայ Հին Կտակարանէն, Պետրոս Առաքել ղեղեցիկ կերպով կրցած է յարմարցնել այսօրուան փառաւոր տօնին հետ : Ան մեզի կ'աւետէ Քրիստոնէական Եկեղեցիի հիմնադրութիւնը, սկզբնաւորութիւնը :

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իմաստութեամբ Քրիստոսի հրաշափառ Յարութեան յաջորդող իրաքանչիւր Կիրակիին տուած է յատուկ անուն մը, որ իր մէջ կը պարունակէ յատկանշական ղէպք մը, և կամ Քրիստոնէական Եկեղեցիի հետ կապուած մեծ իրադարձութիւն մը : Ահա անոնցմէ մէկն է Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակին, որ կը զուգադիպի Զատիկի Գ. Կիրակիին, և որ Հայաստանեայց Եկեղեցիի ամենէն խորհրդաւոր, իմաստալից և ներշնչող տօներէն մէկն է, նկատելով որ այդ օր կը տօնուի Եկեղեցիի հիմնադրութեան սկզբնաւորութիւնը :

* * *

Աշխարհամատուռ բարե ինքնին կը նշանակէ այն Եկեղեցին կամ մատուռ որ յատուկ է և կը պատկանի աշխարհի բոլոր քրիստոնեայ ժողովուրդներուն հաւասարապէս : Բայց այս անունը մասնաւորաբար տրուած է Սիոնի վերնատան՝ ուր Քրիստոս, իր զատկական վերջին ընթրիքը կատարեց և հաստատեց Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը, երբ բազարջ հացը աննելով տրուաւ առաքելներուն, ըսելով. «Առէք կերէք, այս է մարմինս» : և ապա աննելով անապակ ղինիի բաժակը տուաւ անոնց, ըսելով. «Արբէք, այս է արիւնս» :

Ահա այսպէս քսան դարեր առաջ, մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի ժամանակ, և նոյնիքն իր կողմէ հիմը ղրուեցաւ, հիմնադրուեցաւ տիեզերական Եկեղեցին Սիոնի բարձունքին վրայ, ուր առաքելներ և հաւատացեալներ Քրիստոսի հրաշափառ Յարութենէն ետք սկսան հաւաքուիլ :

Սիոնի վերնատունը եղաւ այն սիրուած վայրերէն մին, ուր առաքելներ և հաւատացեալներ սովորութիւն ղարձուցին հաւաքուիլ Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը կատարելու և աղօթք մատուցանելու առ Բարձրեալն Աստուած : Եկեղեցիի այս փոքրաթիւ անդամները միասիրտ ու միախորհուրդ, կը հաւատային Յիսուսի՝ Քրիստոս (Մեսիա) և Աստուծոյ Որդի ըլլալուն, ու կը

ճգնէին ապրիլ Քրիստոսի կեանքին և քարոզած սկզբունքներուն համաձայն օրինակելի և բարեպաշտ կեանք մը : Այս ողորմ ու ներշնչումով տարուած պահեքն մէկուն էր որ տեղի ունեցաւ Ս . Հոգիի Գալուստար , երբ կը տօնէին Պենտեկոստէի տօնը :

Մինի Վերնատունը կը կարծուի եղած ըլլալ Յովհաննէս Մարկոսի տունը , ուր հաւատացեալներ յաճախ կու գային հաւաքուելու և միասնական աղօթք մատուցանելու (Գործք ԺԲ , 12) :

Ինչպէս վերը յիշուեցաւ , այս Կիրակիին կը տրուի նաև կանաչ Կիրակի անունը . այս կոչումի սկզբնաւորութեան մասին թէև յիշատակութիւն մը չունինք , բայց ան շատ գեղեցկօրէն կը պատշաճի Աշխարհամատրան զազափարին :

Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Յարութենէն անմիջապէս ետք , առաքելները որոշ վախի և ընկրկումի պահեր ապրեցան , իրենք զիրենք բարոյութիւն առանձին , անօղնական և անպաշտպան գտնելով . սակայն Փրկչի՝ քարոզութեան շրջանին ազադայի մասին բրած որոշ սկնարկութիւններ և իր Յարութենէն ետք յաճախակի երևումները զիրենք անմիջապէս քաջալերեցին . անոնք գօտեպնդուած , եռանդով ու խիզախութեամբ վերսկսան իրենց սրբազան առաքելութեան , քարոզելով և ամէն կողմ տարածելով Քրիստոսի սուրբ խօսքերը : Այսպիսով քրիստոնէական լոյս հաւատքը սկսաւ ամէն կողմ տարածուիլ , նման ցորենի հատիկին որ իննալով բարբեր հողի մէջ՝ կ'աճի ու ծաւալելով բազում արդիւնք կու տայ : Ահա այդ սերմը եղաւ նոյնինքն մեր Տէրը Յիսուս Քրիստոս , որ քրիստոնէական հաւատքի առաջին սերմերը ցանց առաքելներու սրտին ու հոգիին մէջ և սրտնք իրենց կարգին շարունակեցին այդ սրբազան առաքելութիւնը , քրիստոնէաները առաջնորդելով ճշմարիտ և իրաւ հաւատքի ուղիին ընդմէջէն :

Սկզբնական դարերու Հայրերը զիտցան Եկեղեցիի այս ձևով ծրարակումը , աճումը նմանեցնել բնութեան թարմութեան և կանաչացման ու կանաչ կոչել այս Կիրակին : Գարնան երբ բնութիւնը կ'արգասաւորուի ու կը ստղարբի , խնդի ու ծիծաղի , դալարութեան ու կանաչութեան , նոր կեանքի մը բուկղբնաւորութիւնը կ'աւետէ . ահա այդպէս ալ քրիստոնէական Եկեղեցին այսօր կու գայ աւետելու իր սկզբնաւորութիւնը : Այս Կիրակի , բնութեան սրբազան տարուան առաջին բարիքները և քրիստոնէական Եկեղեցիի սկզբնաւորութիւնը կու դան իրարու հետ գուղորդուիլ , միաձուլուիլ՝ նոր կեանքի մը աւետիսը սալու համար :

Եկեղեցիի Գլուխն ու Հիմք եղաւ Յիսուս Քրիստոս , որուն շնորհիւ այսօր մեզի՝ հաւատացեալներու խորհուրդներ կը մտաակարարուին , շնորհքներ կը բաշխուին և մեղքերու թողութիւն կը տրուի : Եկեղեցին քրիստոնէական մարմնի ամբողջութիւնն է , միացման նշանը անոր զխոյն՝ Քրիստոսի հետ , և կապը՝ հաւատացեալներու եղբայրութեան :

Եկեղեցի բառը իր պարզ նիւթական նշանակութեամբ աւելուած , հասարակաց աղօթքի , աստուածային պաշտամունքներու և սուրբ խորհուրդներ կատարելու սահմանուած նուիրագործեալ վայր մըն է : Աշխարհամատրան տօնը , Վերնատունին՝ քրիստոնէութեան առաջին Եկեղեցին ըլլալուն յիշատակի օրն է . Վերնատունը քրիստոնէայ Եկեղեցիներու նախատիպը և Եկեղեցւոյ նուիրականութեան նշանակն է :

Քրիստոս իր վարդապետութեամբ մեծ յեղաշրջում մը յառաջ բերաւ մարդկային բնկերութենէն ներս : Այդ յեղաշրջման զէնքը եղաւ սէքը, որ կոչուած է անուացնելու մարդոց զգացումները, մարդկութիւնը բարձրացնելու իր առօրեայի ճղճիմ հաշիւներէն, զայն տանելու համար դէպի աշիւը, դէպի զեղեցիկը : Քրիստոնէական վարդապետութիւնը մեղի կը սորվեցնէ պաշտել միայն մեր Տէր Աստուածը. սիրել ու յարգել մեր ծնողքը, սիրել բարեկամն ու բնկերը, և աւելին՝ դժուարագոյնն ու մեծագոյնը՝ սիրել թշնամին. այս վերջինը կը պահանջէ գերագոյն ճիղ և ուժ, և որուն օրինակն ու տիպարը հանգիստացաւ ինքը Յիսուս Քրիստոս : Անոր համար է որ քրիստոնէական կրօնքը կոչուած է նաև սիրոյ վարդապետութիւն :

* * *

Ճշմարտութիւնները յախտենական և անկորնչելի են : Անոնք հիմնաւորուած կ'ըլլան ամուր և հաստատուն խաբիսիւններու վրայ : Գարեբ կու գան ու կ'երթան, սակայն չեն կրնար բառ մը անգամ փոխել այդ ճշմարտութիւններէն : Քրիստոնէական եկեղեցին զարբերու վերվայրումներու ընդմէջէն հասած է ներկայ օրերուն, ու տակաւին զայն կը գտնենք թարմ ու նոր, ինչպէս էր ասկէ քսան դարեր առաջ. որովհետև անոր վարդապետութիւնը ճշմարիտ է և արտաքին երևոյթներ չեն կրցած եղծանել անոր սրբութիւնն ու կուսութիւնը, չեն կրցած խախտել անոր ներքին ամուր միութիւնը, անքակտելի կապը :

Հայաստանեայց եկեղեցին ըլլալով անբաժան մէկ մասը բնոյհանուր եկեղեցիին, միշտ ամուր կառչած ու կապուած մնացած է Քրիստոսի, անոր վեճ ու վսեմ լուսաւոր քարոզութեան, առաքելներու և եկեղեցւոյ Հայրերու դաւանած վարդապետութեան : Հայ եկեղեցականը և Հայ ժողովուրդը դարեր շարունակ ու մինչև օրս հաւատարիմ մնացեր են իրենց հայրերու ուղիղ դաւանութեան և ճշմարիտ հաւատքին :

Գժուարին է այն ճանապարհը որը բացաւ և որմէ քալեց մեր Տէրը Յիսուս Քրիստոս : Գեթսեմանիէն Գողգոթա բարձրացող երկար ճանապարհը դժուարին է, լեցուն՝ տատակներով : Առանց զոհողութեան կարելի չէ հասնիլ Գողգոթայի բարձունքին : Քրիստոս հասնելու համար այդ զագաթին, զոհեց իր անձը և հրաշափառ Յարութեամբ կործանեց մահը :

Մեր նախահայրերն ալ զիտցան քալել այդ ճանապարհէն ու հասնիլ իրենց փառքի պսակին : Շարունակենք քալել մեր նախահայրերու ճամբայէն, հաւատալով որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, համաձայն իր խոստման, զօրավիզն ու օգնականը պիտի ըլլայ մեզի մինչև աշխարհի կատարածը. «Ես ընդ ձեզ եմ գտնեման աւուրս, մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ, 20) :

«Քաղաւոր Երկնաւոր զԵկեղեցի քո անշարժ պահեա և զերկարպառուս անուանող քում պահեա ի խաղաղութեան. ամէն» :

ԱՂԱՆ ՎՐԴ. ՊԱՒԻՕԶԵԱՆ

ABOU' L ALA MAHARI

SURA THE SIXTH

In the blazing heat of the mid-day sun, Thyme and Narcissus spread their fragrance,
 And the caravan tired and sweaty, covered, lost in dust did slowly advance.
 "Fly on caravan, and rend you the storm, enter deep into the sandy clime,"
 Thus was speaking now in his angry heart Abou-Mahari, the poet sublime,
 "Let the desert wind blow against my face, and let it efface my track on the sand,
 Let no man breathe the air I breathe now, no man discover the place where I land.
 I already see the fierce tawny lions, from yellow sand-piles they see me, they watch,
 They look in my eyes; I see from their mane the wind does sparks of lightning detach.
 Them do I call now, "Come I'll not escape, come on and eat me, my heart you devour,
 I shall not return to human beings, I shall not open before them my door.
 What are men? — O, they are devils with masks, they have fangs and claws which
 they hide and shut,

And their tongues are poisonous daggers; hoofs also have they, and do chew their gut,
 And who, who are men? — Packs of foxes are they, traitors, apostates, terribly selfish,
 Blood-lickers are they, infant-tearing beasts, hangmen, hangmen that only your fall wish,
 In poverty fawning and in misery traitors are they, also timorous,
 In wealth immodest, spiteful, haughty, also revengeful, boastful, imperious.
 The good ones always are sacrificed here, and the bad ones do oppress and torment
 The few who are good in this world of ours; so in the life's field darnel does augment
 I do curse you now, you men far away, your evil and good and your religions
 That do only forge, hammer iron chains, and for slavery do prepare dungeons.
 Malicious world, here the powerful gold makes the thief noble and the fool and knave
 Wise, intelligent; the ugly one, charming; the harlot, virgin; the timorous, brave.
 O, world of mankind, you blood bath-house where the weak is guilty and the strong
 is right;

Where whatever ugly thing is done by men, money always has been the guiding might:
 And only for gain, man has always been a servant of gain with his paw of crime,
 Filthy abortion of satan is he, whom others take as God's picture sublime,
 One by one counting my caravan's steps, on my unending, infinite pathway,
 And these countless steps added together equal not man's fault of one single day.
 I do declare now to the East and West, to countries in north, to countries in south,
 — Whose opposing winds, all together now are list'ning to the words of my mouth.
 Take you and announce my inflaming words, that the world may bear, from the west
 to east,

That filthier than man, atrocious than he is the man again and not the wild beast
 So long as the stars do wink their eyes and their unquenched light to the desert send,
 So long as the piles of the burning sand of the desert do hiss like a serpent,
 Run away car'van from that brothel's lewd and licentious and filthy banquets,
 From the public-place of its oppressions and from its filthy salesman's markets,
 And you run away from community, from revenge of men, their justice and right.
 Away from women, from love, from friends, breathless run away from man's shadow's
 sight,

Go on caravan, do grind and crush human justice and right under your hard toes
 And with clouds of dust of your path cover all evil and good, sovereignty, laws.

Let the fiery winds rustle over me, and let me be torn by tiger and lion,
 You, my caravan, do not turn back, to th'end of my days you go on and on".
 Stretching like arrows the arch of their necks, now the camels of Abou-Mahari
 Leaving behind them innumerable caravan of dust, did onward hurry.
 They did dart onward in the scorched fields to the far distance, towards the unknown,
 And on their pathway raised clouds of dust covering the fields, the cities and town.
 As if terrified, Abou-Mahari, without stopping, was running away,
 And rule and order, wife, community were pursuing him and blocking his way.
 But the caravan, with jingling of bells, without looking back, in hasty motion
 Passed the pyramids of the great cities and the noisy roar for bread and passion.
 It ran rapidly — passing the villages that for centuries did not at all move
 In their ignorance — and sunk in far climes in search of the gold star and its earnest love.
 The stubborn car'van thus all days and nights, the contorted pathway did swallow and lap,
 And with troubled soul, Abou-Mahari did angrily think, his brows wrinkled up.
 And the caravans of his mad thoughts now, like fierce falcons caught in the stormy wind,
 Soared in dispersion, in confusion soared, desirous a bright station to find.
 Abou-Mahari without tears did weep and infinite was the grief in his soul,
 As the pathway that stretched before him, like a serpent that has no end at all.
 He looked not behind at the way he passed, he grieved not for what he did abandon,
 He did not salute, nor took the salute of the car'vans that met him and passed on.

AVEDIK ISAHAKIAN

Trans. M. MANOUKIAN

* * *

Թաղուիմ, երանի՛, վարագայ սարին,
 Առջևըս փրոուի ֆաղաքը վանայ,
 Արևն առտուան նըստի իմ ֆարին,
 Վարի պատկերին նայի, զարմանայ:

Սիփանը՝ հեռուն, գըլխին՝ աստղաքագ,
 Ցայգն ամբողջ՝ անֆուն հըսկումի կենայ,
 Վարագայ սարէն՝ լուսինն նորածագ՝
 Համապատկերին նայի, զարմանայ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

1. ԿԱՐԱՄԵՏ ՔՆ. ՎԱՆԵՑԻ

(1395 — 1476?)

ԺԵ. Դարու բազմաբնույթ գրիչներէն է Կարապետ ՔՆ. Վանեցի, որուն գործունէութիւնը կը տարածուի 60 տարիներու վրայ: Ան որդին էր Ստեփանոս Քահանայի և Մինայի: Աշակերտած է Մկրտիչ Քահանայի և Խլաթեցի Գրիգոր Վարդապետի: Իրեն կենսակից ունեցած է նախ Թանաու խաթունը (1421) և աւելի յետոյ Խոնդ խաթունը (1451): Ընդհանրապէս սպարած և աշխատած է Վանի մէջ:

Իր բեղուն գրչէն ծանօթ են մեզի աւելի քան երկու տասնակ գործեր. կը ներկայացնենք ժամանակագրական կարգով:

1.— Աւետարան, օրինակած է, և ծաղկած առաջին անգամ, 1418ին, Վանի մէջ, Ղազար տանուտէրի ցանկութեամբ.— Ձեռ. Երևանի, Թիւ 4931:

2.— Մաշտոց, օրինակած է 1418ին, Վանի մէջ, Անդրբանոսի որդի Յովանէս տանուտէրի ցանկութեամբ.— Ձեռ. Վիեննայի, Թիւ 108:

3.— Աւետարան, օրինակած է 1421ին, Վանի մէջ, Ստեփանոս կրօնաւորի համար.— Ձեռ. ասենօք Վանի Աբարուց եկեղեցւոյ:

4.— Աւետարան, օրինակած է 1421ին, Վանի մէջ, տանուտէր Յովանէսի համար.— Ձեռ. Երևանի, Թիւ 3716:

5.— Աւետարան, օրինակած է 1422ին, Վանի մէջ, Թուլուսի որդի Յովհաննէս Քահանայի փափաքով.— Փիրղալմեան, Նօտարք Հայոց, էջ 69:

6.— Յայտաւարք, օրինակած է 1427ին, ըստ երևոյթի Վանի մէջ, Թաւաքալի որդի Յովանէս տանուտէր խոնդրանքով.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 659:

7.— Աւետարան, օրինակած է 1435ին, Վանի մէջ, բրուտ Ստեփանոսի ցանկութեամբ.— Ձեռ. Երևանի, Թիւ 4840:

8.— Յայտաւարքի մը մեծագոյն մասը օրինակած է 1435ին, Երկայն Ընկուզեաց Վանքին մէջ.— Ձեռ. Ս. Յակոբեանց, Թիւ 25:

9.— Աւետարան, օրինակած է 1437ին, Վանի մէջ, Ղազարի որդի Սարգիս Արեղայի ցանկութեամբ.— Ձեռ. Երևանի, Թիւ 5530:

10.— Յայտաւարք, օրինակած է 1442ին, Վանի մէջ, մահդեսի Մխթարի խոնդրանքով.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 604:

11.— Յայտաւարք, օրինակած է 1445ին, Վանի մէջ, Խուրաբէկի որդի Մկրտիչ կրօնաւորի ցանկութեամբ.— Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, Թիւ 655:

12.— Աւետարան, օրինակած է 1451ին, Վանի մէջ, Ստեփանոսի դուտը Փաշայի ցանկութեամբ.— Ձեռ. Երևանի, Թիւ 4893:

13.— Ճառընտիր, օրինակած է 1453ին շատ առաջ, էվատշահի որդի Յովանէսի համար.— Ձեռ. Երևանի, թիւ 3791:

14.— Մաշտոց, օրինակած է 1454ին, Վանի մէջ, Թումայի որդի Աւետիս կրօնաւորի փափաքով.— Ձեռ. Երևանի, թիւ 905:

15.— Մաշտոց, օրինակած է 1458ին, Վանի մէջ, Մելքիսեղ կրօնաւորի ցանկութեամբ.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, թիւ 140:

16.— Գանձարան, օրինակած է 1462ին, Վանի մէջ, Հէրապետի որդի Ատոմ կրօնաւորի խնդրանքով.— Ձեռ. Երևանի, թիւ 5798:

17.— Աւետարան, օրինակած է 1462ին, Վանի մէջ, Մելքիսէթ տանուտրոջ խնդրանքով.— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, թիւ 229:

18.— Մաշտոց, օրինակած է 1467ին, Վանի մէջ: Ստացող՝ Յովանէս Քաւանայ.— Ձեռ. Երևանի, թիւ 4162:

19.— Գանձարան, օրինակած է 1467ին, Վանի մէջ.— Նօտարք, էջ 231-232:

20.— Ճաշոց, օրինակած է Վանի մէջ, 1473ին, Էրբ 78 տարեկան էր: Ստացողք՝ Խոջա Մարշահ և Էղբայրը Շաքար.— Ձեռ. Երևանի, թիւ 4875:

21.— Աւետարան, օրինակած է 1475ին, Վանի մէջ, Մկրտչի որդի աղքատ Յովսէփի խնդրանքով.— Ձեռ. Երևանի, թիւ 5013:

22.— Աւետարան, օրինակած է 1475ին, Վանի մէջ, ոսկերիչ Ասպահանշահի խնդրանքով.— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, թիւ 482:

23.— Ճառընտիր — Տօնակալի մը օրինակութեան մասնակցած է 1476ին «տկար անձամբ», և գրած է 20 տետր, և ապա կազմած է դայն իր «տկար» մասններով: Ստացող՝ Կարապետ Քաւանայ՝ որդի Մկրտչի Քաւանայի.— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, թիւ 506:

2. ԿԱՐԱՊԵՏ ՔՆ. ՈՍՏԱՆՑԻ

(1439 — 1467)

ԺԵ. Դարու արդիւնաւոր գրիչներէն է Կարապետ Քաւանայ Ոստանցի, որդի Ստեփանոս Քաւանայի և Փաշայի: Ան ապրած և գործած է Ոստանի մէջ: Իր գործունէութիւնը կը տարածուի երեք տասնամեակներու վրայ: Այդ շրջանին իր արտադրած ձեռագիրներէն մեզի ծանօթ են մօտ տասնեակ մը. կը ներկայացնենք ժամանակագրական կարգով:

1.— Ճաշոց, օրինակած է 1439ին, Ոստան ծովահայեաց քաղաքին մէջ, Թումայի որդի տանուտէր Յոհաննէսի պատուէրով.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 556:

2.— Գանձարան, օրինակած է 1440ին, Ոստանի մէջ, Թումայի որդի տանուտէր Նարեկացի Հիւան Պետրոսի փափաքով.— Ձեռ. Երևանի, թիւ 5404: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 509:

3.— Գանձարան, օրինակած է 1444ին, Ոստանի մէջ, տանուտէր Ատոմի և իւր կենակից Դովլամի փափաքով.— Ձեռ. Երևանի, թիւ 8058:

4.— Ժամագիրք, օրինակած է 1445ին, Ոստանի մէջ, խնդրանքովը Ստեփանոսի որդի Յակոբ կրօնաւորի, որուն Էղբայրը Լուսաւազ նահատակ-

ուած է «յանաւրիկաց, վասն սնուանն Քրիստոսի» — Յիշատ. Ժե. Դարբ. , Ս. Մասն, Թիւ 656 :

5.— Գանձարան, օրինակած է 1457ին, Ոստանի մէջ, Խոջայ Ստեփանոսի սրբի Կարապետ Քահանայի խնդրանքով.— Զեռ. Երևանի, Թիւ 4091 :

6.— Ճաշոց, օրինակած է 1459ին, Ոստանի մէջ, Խոջայ Արղլը-Աղլըի ցանկութեամբ — Լ. Ս. Խաչիկեան, Յիշատ. Ժե. Դարբի, Բ. Մասն, Թիւ 154 :

7.— Աւետարան, օրինակած է 1461ին, Ոստանի մէջ, Գուհարի վաճառով.— Յիշատ. Ժե. Դարբի, Բ. Մասն, Թիւ 206 :

8.— Աւետարան, օրինակած է 1467ին, Ոստանի մէջ, Աւետարանի սրբի Սուրբանշահի համար.— Զեռ. Երևանի, Թիւ 6390 :

9.— Աւետարան, օրինակած է 1467ին, Ոստանի մէջ, Թումանյի սրբի Յովհաննէս Քահանայի ցանկութեամբ.— Յիշատ. Ժե. Դարբի, Բ. Մասն, Թիւ 333 :

Ն. ԱՐՔԵՊՍ. ԾՈՒԱՅԱՆ

Ստեփանոսի սրբի համար, 1457 թ. — Զեռ. Երևանի, Թիւ 4091 :
Աւետարան, 1459 թ. — Լ. Ս. Խաչիկեան, Թիւ 154 :
Գուհարի վաճառով, 1461 թ. — Յիշատ. Ժե. Դարբի, Բ. Մասն, Թիւ 206 :
Թումանյի սրբի համար, 1467 թ. — Զեռ. Երևանի, Թիւ 6390 :
Խոջայ Արղլը-Աղլըի ցանկութեամբ, 1459 թ. — Լ. Ս. Խաչիկեան, Թիւ 154 :
Յովհաննէս Քահանայի ցանկութեամբ, 1467 թ. — Յիշատ. Ժե. Դարբի, Բ. Մասն, Թիւ 333 :

Ս. ԱՐՔԵՊՍ. ԾՈՒԱՅԱՆ

Ստեփանոսի սրբի համար, 1457 թ. — Զեռ. Երևանի, Թիւ 4091 :
Աւետարան, 1459 թ. — Լ. Ս. Խաչիկեան, Թիւ 154 :
Գուհարի վաճառով, 1461 թ. — Յիշատ. Ժե. Դարբի, Բ. Մասն, Թիւ 206 :
Թումանյի սրբի համար, 1467 թ. — Զեռ. Երևանի, Թիւ 6390 :
Խոջայ Արղլը-Աղլըի ցանկութեամբ, 1459 թ. — Լ. Ս. Խաչիկեան, Թիւ 154 :
Յովհաննէս Քահանայի ցանկութեամբ, 1467 թ. — Յիշատ. Ժե. Դարբի, Բ. Մասն, Թիւ 333 :



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Բ.— Ի ՍՈՒՐԻ ԾՆՈՒՆԴՆ ՓՐԿՉԻՆ

Զի անէծքն լուծաւ, արտասուան փարատեցաւ, տըրտութիւնն սփոփեցաւ, վիշտն հայթայթեցաւ, սուգն մխիթարեցաւ, փշարերութիւնն արմատախիլ եղև, արտաբուսին դարձեալ, դրախտն բացաւ, դժոխքն աւերեցաւ, և երկիր խաղաղութեամբ լցաւ:

Փառք ի բարձունս, զի բարձրեալն անտի խոնարհեցաւ, յերկիր խաղաղութիւն, զի խոնարհութեամբն անճառելի՝ ըզխտոյութիւն երկրի և զպատերազմունս անմարմնոցն՝ մարմնաւորութեամբն իւրով հանդարտեցոյց, քանզի ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից ծագեցաւ, Տէր որ ետ զբաղջրութիւն, և աշխարհ մեր տացէ զպտուղ իւր, արդարութիւն առաջի նորա զնացէ:

Զի ուստի լցաւ անիծ իւր, այսօր անտի լցաւ օրհնութեամբ, խայթոց օձին բթեցաւ, որ ի թունից նորա զլորեցան, խանձարբօք մանկանս այս աղբեցան, թոյնք նորա եղձան, և լյանապատահոս և ի կարծրաբուրդիս յաղբերէ յայտմանէ ի բաց լուացաւ, թշնամին պատրեալ կործանեցաւ, և խաւարեալքն լուսաւորեցան:

Յիրաւի բարբառեցաւ ձայն երկնայնոցն, ասել՝ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն. զի հաճեցաւ վասն մարդկան ուրացողաց և ամպարչխաց արարողն մարդոյն՝ այսօր մարդ լինել, և ի փառս իւր զմարդկայինն վերացուցանէ. ապա պարտ է՝ ուրախանալ երկրաւորացս ընդ երկնաւորսն, յազգաս երկնաւորին, և երկնաւորքն՝ ուրախանալ ընդ երկրաւորքս, յազգաս երկրաւորին: Երկրաւորքս պարտիմք՝ զի զոր ոչն կարէաք տեսանել յերկինս տեսաք յերկիր, և երկնաւորքն ուրախանան, զի զոր ոչն կարէին նրկատել երկնաւորան՝ տեսին երկրաւս:

Քանզի բնութիւն աստուածութեանն և մարդկութեանն միացան այսօր առ մանուկս այս, որ ծնաւ փրկիչ մեզ, առ մի երես, առ մի սրդին միածին, որ էր անտեսանելի աստուածային բնութեան սրդի, այսօր եղև տեսանելի մարդկային բնութեամբն՝ հրեշտակաց և մարդկան, զԱստուած՝ մարդիկ մարդ տեսին, և զմարդն հրեշտակք՝ Աստուած փառաւորեցին: Ապա պարտ է զմարմինն հաւասար բանին Աստուած խոստովանիլ, զի ի ձեռն մարմնոյ երեւեցաւ անտեսանելին երկնաւորաց և երկրաւորաց: Եւ այսօր երկնաւորքս տօնակից լինին երկնաւորացն, և ասել՝ փառք ի բարձունս Աստուծոյ, որ ի բարձրութեանէ երկնից խոնարհեցաւ, և յերկիր խաղաղութիւն, զի իջանելոյն իւրով, զերկիր ի խոսովութենէ հանդարտեցոյց, ի մարդիկ հաճութիւն, զի արարողն երկնից և երկրի մարդ լինի:

Ով առաւել սքանչելեացն և հրաշագործութեան հրաշագործողին, որ էր և է և միշտ է, և ի վերք քան զքան և զմիտս, որ ի հոգոյ մարդ արարեալ՝ մարդ լինի, որ ի կուէ բանաւոր անօթ ստեղծեալ, անօթ ստեղծանի, որ ի նս-

խաստեղծն փշեաց հոգի կենդանի, այսօր ի ստեղծուածէ առեալ միաք, հոգի, որ է անմահ աստուածային բնութեամբն, այսօր առեալ զմահկանացու բնութիւնս մեր, և արարեալ անմահ աստուածային բնութեամբն: Այսօր առեալ ըզմահկանացու բնութիւնս մեր և արարեալ անմահ, և մեռանի Աստուած մարմնով, զի կենդանացի մարդն աստուածութեամբն: Ճոխն աղքատանայ, զի աղքատն՝ նորա աղքատութեամբն մեծացի:

Ո՞վ իրացդ սքանչելի, ճոխն աղքատանայ և ի մարմնոյ իւրոյ կերակրէ դամենայն տիեզերս, ճոխն աղքատանայ և զխոնա)րհն՝ բարձրացուցանէ, ճոխն աղքատանայ և զհոգոն քակէ յաթոռոյն, ճոխն աղքատանայ և զքաղցեալսն լընու բարութեամբ, ճոխն աղքատանայ, և զմեծատունն արձակէ ունայն:

Ո՞վ աղքատութեանս այս, օտարութեանս, որ զերկինս ձդեալ և արարեալ զերկիր, և զընակեալ ի բարձրութեան երկնից, այսօր յանապատն յայրին, աղքատարար ծնանի: Որ ի փայլատակմանէ աստուածութեան նորա բոցեղէն թևաքողեալքն ծածկէին զերեսս իւրեանց, այսօր աղքատարար ի խանձարուր պատի: Որ բիւրս բիւրուց հրեշտակք պաշտեն զնա, և Ռք Ռաց հրեշտակապետացն սպասաւորեն նմա(ն), այսօր ի հովուաց բարեբանի: Որ ի վերայ հրանիւթ աթոռոց քառակերպից նստի, այսօր իբրև աղքատ ի մսուր անբանից բազմի:

Ո՞վ աղքատութեանս այս հիանալի, յայրին աղքատարար տղայ լինի, և յերկինս աստուածարար յերկնաւորաց բարեբանի: Յայրին ի խանձարուր պատի, և յերկինս ի հրանիւթիցն փառարանի: Յայրին ի մսուր բազմի և յերկինս ի ծոցոյ Հօր ոչ պակասի: Յայրին ի հովուաց փառաւորի, և յերկինս ի դասապետաց փառարանի:

Չայնպիսի ճոխն՝ այսպիսի աղքատ տեսանեմ. զոր ի կրկին՝ ի վեր և ի վայր տարուբերեալ ի մէջ ածի: Այլ տեսցոք եթէ յաղագս աղքատիս այս զի՞նչ պատմէ մեզ աստուածային աւետարանիչն Մատթէոս: Ի ծնանելն Յիսուսի, առէ, ի Բեթղահէմ Հրէաստանի, յաւուրս Հերովդի արքայի, ահա մոզք յարևելից եկին յերուսաղէմ, և ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն հրէից, զի տեսաք զաստղն նորա յարևելս, և եկաք երկիր պագանել նմա: Իսկ եթէ այդ այդպէս է յաղագս աղքատի այսր, ապա աղքատութիւնս այս կարի մեծապէս վերագոյն է. զի թագաւորք յարևելից զան նմա յերկրպագութիւն յերուսաղէմ, և զնա ի խանձարոցն թագաւոր կոչեն, զոր և յուսա Հերովդէս և խոսովեցաւ և ամ. Երուսաղէմ ընդ նմա:

Եւ ասեն ցժոզն, զի՞նչ ասէք, ով արք օտարք, թագաւոր ո՞ լուաւ այդպիսի, զի ի խանձարուրս այդպէս հռչակեսցի, մինչև յերուսաղէմ յարևելս հռչակեսցի անուն նորա, և թագաւորք դան նմա յերկրպագութիւն: Մեք ասա թագաւոր այլ ոչ ճանաչեմք՝ բաց ի Հերովդէէ արքայէ, միթէ սմա՞ եկիք երկիր պագանել: Ասեն մողթն. մեզ ծընեալ թագաւորի նշան եղև, և ոչ ի տիս հասակի: Ասեն նոքա. երթայք մոլորիք, և թագաւոր այլ ոչ գտանէք բաց ի Հերովդէէ յայսմանէ: Ասեն մողթն, եթէ այսքան երկայնադոյն ճանապարհաւ ոչ մոլորեցաք ինդրելով զՀրէաստան, այնպէս և նովաւ քաջայոյս ևմք գտանել ի Հրէաստան զծընեալ արքայն. զի թէ ծնեալ արքայն յերկնաւորաց ոչ էր հրչակեալ, սակայն զօրութիւն երկնային սպասաւորութեամբ յաղագս նմա յերկրպագութիւն մեզ ոչ էր առաջնորդեալ: Ասեն հրէայքն՝ զի՞նչ իցէ զօրութիւն երկնաւորին, կամ զիս՞րդ լինի ծնունդ երկնային, առաջնորդութեան զօրութեան երկնային, այս թագաւորք՝ հպարտք և օտարոտի և ստահակք ոչ էին եկեալ նմա յերկրպագութիւն:

Ասեն երբայցիքն. զի՞նչ իցէ զօրութիւն Աստուծոյ: Ասեն նոքա. Աստ-
ղն զի՞նչ է զոր ասէք: Աստղն արարչութիւն է, և ոչ զօրութիւն: Ասեն մոզ-
քըն. զուք էք մոլորեալք, քանզի զխեղճ քստ սոյնութեան աստեղաց և զծր-
նընդենէ երկրաւորաց, օրէնք աստեղաց ոչ փոխին մինչ ցկատարած աշխարհի,
որ զնազունք իցեն՝ ամենին յընթանալոյ ոչ խափանին. յարեւելից յարեմուտս
կատարեն զընթացս իւրեանց. և որ չեն զնայունք՝ ուր հաստատեցան անդ ան-
չարժ կան և մնան յաւիտեան, ոչ այլ բարձրանան և ոչ այլ խոնարհագոյնս և-
րեին: Իսկ զօրութիւն աստեղս այս, յորժամ դադարէաք՝ անդ դադարէք, և ի
կանխելն մեր՝ առաջի մեր ընթանայք, ի պէտս առաջնորդութեան, և թողեալ
զբարձրութիւն երկնից՝ կարի խոնարհագոյն օղազնաց առաջի մեր ընթանայք.
և ոչ եթէ յարեւելից յարեմուտս կատարէք, քստ օրինակի աստեղաց ըզդնացս
իւր, այլ ի հրախոյ ի հարաւ, և ոչ եթէ ի տուէ քստ սոյնութեան ծածկէր ի
ճառագայթից արեգականն, և ի զիշերի միայն ծագէր, այլ ի զիշերին ծածկէր
ի մէնջ և ի մէջ արեգականն, որպէս զօրութիւնն արարողին արեգական առա-
ւել ճառագայթիւ առաջնորդէք: Եթէ ոչ էք ծնունդն երկնաւոր, սակայն զօրու-
թիւնս այս, յօրինակ աստեղ, այդպիսի օտար օրինակօք մեզ ոչ սպասաւորէք,
և ի խանձարրոց մանկան, թագաւորք օտարք՝ մեծամեծք և անհաւատք. ըն-
ծայլից նմա յերկրրպագութիւն: Չայս ամենայն օրինակս բերէր հարցանել մո-
ղուցն, ասելն ուր է որ ծնաւ արքայն հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւլս
և եկաք երկիր պաղանել նմա: Չայս ամենայն խօսէին ցնոսս և զայս լսէին ի
նոցանէ, զոր և լուաւ Հերոդէս և խոփեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա:

Զի՞ խոփիս Հերոդէս և անմտարար տրտմիս, թագաւորութեանս? Լը-
ւար ծնեալ մանկանն՝ ստոյգ է, այլ ոչ զի նստցի յաթոռ թագաւորութեան
քում, այլ զի աղքատարար զայստեամբ աւերեցէ զօրութիւնս զժողոջ: Իսկ
եթէ վասն երկրրպագութեան թագաւորաց թախճեալ տրտմեսցիս՝ զուցէ
Հրէաստան այնպէս նմա երկիր պաղանեն, մի տրտմեսցիս, այլ ուրախացիր, զի
եթէ թագաւորք օտարք և հեռաւորք ճանաչիցեն զնա թագաւոր թագաւորաց,
և եկեալ նմա յերկրրպագութիւն խոնարհութեամբ, զի վայելիցեն զթագաւո-
րութիւնն իւրեանց, խոնարհեաց և զու ընտանեղոյն և զնա նրմա յերկրրպա-
գութիւն և վայելեալից ճրբամանաւ նորա, որպէս և օտարք զքո թագաւորու-
թիւնդ ի կեանս յայս: Եթէ երկնաւոր կարծիցես, ոչ կարես հակառակել և յետս
հարկանել. դարձեալ պարտ է քեզ խոնարհութեամբ երկիր պաղանել և վայելել
զկեանս յայսմ աշխարհի թագաւորութեամբ քոյ, և զհանդերձեալ զկեանս ար-
քայութեան նորա: Այս թէ պարզարար երկրաւոր համարիտ միայն, ընդէ՞ր
բընաւ երկնչիս, որ ասացեր՝ եթէ ոչ երբեք լուեալ է ի խանձարրոց թագաւոր,
և մինչև նա ի տիս զայցէ թագաւորութեան՝ մի՞թէ առանց մահու ակն ունի-
ցիս մնալ և զառյապայ լինելոցն առաջի աշաց ունելոյ տրտմեսցիս:

Այո՛, ասէ, վասն այդորիկ տրտմիմ երիս պատճառանօք, [զ]ի լուեալ
եմ ասելոյ զիրն՝ ի Բեթղահեմ ելցէ իշխան, որ հոփուեսցէ զժողովուրդ իւր:
Եւ երկրորդ զի զիրն այն կատարեցաւ և թագաւորքն այս մեծագոյնք եկին նր-
մա յերկրրպագութիւն: Երբորդ՝ զի աստեղըն առաջնորդ[ը]ութեամբն եկեալք
յերկրրպագութիւն, ոչ թէ միայն ասացին՝ ո՞ւր ծնաւ արքայն, այլ թէ ուր ծնաւ
արքայն հրէից: Եւ ոչ դարձեալ թագաւոր թագաւորաց, այլ Հրէից միայն, զի
ժողովուրդս թողեալ զիս երթան նմա երկիր պաղանեն:

Աւագ շարագոյն անմտութեանն, մի՞թէ լուար մարգարէի նախագու-
շակեալ, կամ վասն Սաուղայ, կամ վասն Դաւթի և Սողոմոնի, կամ վասն այլ
թագաւորաց, որ թագաւորեցին: Ոչ, ասէ, ոչ մարգարէք մարգարէացան, և ոչ
այդպիսի օրինակօք աստղ զուշակեալ թագաւորաց օտարաց բերեալ զնոսս յեր-

կրպապութիւն : Իսկ թէ այդպէս իցէ, և վասն մանկանն այնր մարդարեւացան, և աստղն վասն նորա գուշակեաց, և այնպիսի օտար և սքանչելի խորհրդով առաջնորդել թագաւորաց օտարաց՝ դալ նմա յերկրպապութիւն, ապա աստուածային իցէ և երկնային : Մի՞ թէ հնար ինչ իցէ հակառակել հրամանացն Աստուծոյ : Ոչ, ասէ. իսկ եթէ աստուածային իցէ, ապա Քրիստոսն է որ դալոց էր :

Արդ հարցեալ քննեցից, եթէ Քրիստոս ուստի՞ դայցէ : Եւ կոչեցեալ ըզբահանայքն, և զգլխիւր ժողովրդեանն, հարցանէր. և նոքա ասեմ՝ ի Բեթղաւեմէ՝ երկիր Յուդայ, ոչ կրտսեր իշխանս Յուդայ. ի քէն ելցէ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իւր զԻսրայէլ : Արդ ստուգեցեր զճշմարիտն, ով Հերովդէս, մի՞ կարծեր թագաւոր Հրէաստանի միայն, այլ իբրև ի թագաւորէ երկնաւորէ՝ ի բաց վճարեալ զգաւածանութեան խորհուրդդ, և անհաւանութեամբ մաքանելով ստուգէ զվրիպունն թագաւորութեան քո :

Ստո[ւ]գէ այժմ զի զրեալն կատարեցաւ, և կատարեա զհնազանդելն և զհաւանելն ուղիղ : Բայց թերևս լեզուն խօսէր խոնարհարար, և սրտին նվթէր զնենգութիւն, խօսէր յազազս ճշմարտութեան զսուան իբրև զուղիղ, և զարգարութեան պատրանքն իբրև զարդարութիւն, ասէր ցնոսա՝ զաղաարար, երթայր քննեցէք վասն մանկանն և յորժամ գտան(ան) իցէք ազդ արարէք ինձ, զի և ես եկեալ երկիր պաղից նմա : Ո՞վ չար դաւածանութեանդ օրինակ հաւատացելոյդ, ծածկեալ ունի զկատարեալ անօրէնութիւն դաւածանութիւնդ և պատիր երկրպապութեանդ, որ սուր քո զաղեղեալ? պատրուակես զկերպարան ստութեան սպասաւորութիւն, ըստ սովորութեան առաջին հրապուրողին, որոյ աշակերտեցար պատրանօք, խօսիս ի ծածուկ սրտի քոյ վասն նորա, որ քննէ ըզսիրտս և զերիկամունս, բարբառիս իբրև ուղիղ զսուան որ զյայտնին անտես ասնէ, և զծածուկս քննէ : Դու խօսիս ոչ ուղիղ, որ խօսիս զանբութիւնդ որպէս և կամիս, իսկ մանուկն որ զուղիղն ճշմարտէ, և զկամակորն կործանէ : Եթէ ուղիղ խօսեցար, կատարեն ուղիղեալքն ուղիղ առաջնորդութեամբ և զարձցին առ քեզ. ապա թէ ոչ ծածուկքդ քո յայտնեցան առ պատեալն ի խանձարուրս, և առ քեզ զարձցին պատրանք դաւածանութեան քո, և ուղիղքն ուղիղեացն ուղիղ ճանապարհաւ : Իսկ նոքա լսելով զայս՝ երթան ի Բեթղաւեմ, ահա աստղն զոր տեսին առաջնորդէր նոցա մինչև եկեալ եկաց ի վերայ տանն ուր էր մանուկն, և տեսին զաստղն և ուրախացան ուրախութիւն մեծ յոյժ :

Ո՞վ թագաւորացն օտարաց ուղիղութեան, ո՞վ թագաւորի ընտանեղունի կամակորութեան, տեսեր ընտանեղունին զառաջնորդութեան պատճառն, որ զուշակէր զՏեառնէ իւրոցն զալ յիւրան, և արամեցան, տեսին օտարոտիքն զառաջնորդն, որ ցուցանէր զհաւաքօղն ցրուելոց յօտարութենէ յընտանութիւն, և ուրախացան ինդութիւն մեծ յոյժ :

Արդ ամենայն յազազս աղքատի այսր, որ յայրն ծնեալ և ի խանձարուր պատեալ, և ի մտւր յանբանից եղեալ ասացաւ և կատարեցաւ : Արդ տեսցուք եթէ պերճացեալ փարթամք և աշխարհայուր թագաւորք զինչ մատուցանեն աղքատիս այս, կամ որպիսի[ս] պատուով պատուեացն : Աւտարք, պերճք և ճոխ թագաւորքն ոսկիակառք, զտղայն ի խոնարհադոյն բազմեալ մտրի : Եկին, ասէ, անդ ուր էր մանուկն, և մտին ի տունն, տեսին զմանուկն, հանդերձ Մարիամաւ մարքն իւրով, և անկեալ երկիր պապանէին նմա :

Մեծ էր աղքատութիւն մանկանս այս, երկինք նմա աստեղքն սպասաւորէր, հարաւ ընդունէր, արևելք՝ զթագաւորսն յերկրպապութիւն պատրաստէր, հրեշտակք ձայնիւ միայն փառարանէին, մոզքն՝ զընծայան մատուցացանէին, և բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարազս, ոսկի, կնդրուկ, և զմուսս :

Ասացէք, ով մոզք երանելիք, թէ (ուր՝ և) ո՞ւր ծնաւ արքայն Հրէից, և եկայք տեսէք և երկիր պաղէք նմա իբրև թագաւորի, մատուցիք նմա պատարագ ոսկի, որպէս վայելէք թագաւորի, և զկնդրուին, և զգմուն, յի՞նչ պէտս մատուցիք՝ պատմեցէք: Լուարուք, ուր նախ սկիզբն երկրպագութեան թագաւորին այս ծագեցաւ, և պատիւ երկրպագութեան և զուշակունն ծագմանն արեղականն արդարութեան: Անտի և յաղազս խոնարհութեան նորա՝ զոր մարդասիրապէս կրելոց է, պարտ էր օրինակացն՝ ըստ իւրաքանչիւրոց զուշակել, երխ մասն մատուցեալ պատարագացս երեքսրբեան օրհնարանութիւն քերթելոցն և սերտրէիցն օրինակէր իբրև մանկան երկնաւորի, իսկ յաղազս մարմնական խոնարհութեանն, որպէս որդի Դաւթի կոչեցաւ, առնու զթագաւորութիւնն նորա և թագաւորեալ ի վերայ աման Յակոբայ, մատուցէք նմա ոսկի: Իսկ ըզխունդն՝ վասնզի կոչի յաղէ Ահարոնի, որպէս քահանայ յախտեան՝ ըստ կարգին Մելքիսեղեկի, և իբրև Աստուծոյ:

Իսկ ըստ տառից երգարանի հօր անուանելոյ մանկանդ ասելով զմա, եղէ ևս որպէս մարդ առանց օղնականի, և ի մեռեալս ազատ, եղին զիս ի զփի ներքնում, սակս այտրելի մատուցէք նմա զմուռս, քանզի մեռանելոց էր, որ և մահուամբ իւրով կենդանացուցանէ զմահացեալսն յախտեան: Ասացից իսկ պարզաբար զոսկին, իբրև թագաւորի, զմուռն, որպէսզի մեռանելոց էր, և ըզխունդն, իբրև Աստուծոյ: Իսկ եթէ չարացայք ընդ զայլուս մեր այսօր, զի ազդ օտարտախ, խառնիճաղանճ, և կռապաշտք, թշնամիք զիկեալք թագաւորի այսմ, և ոչ Հնազանդք արժանի Հաւատալոյ Համարեսցուք զվրկայութիւնս օտարացելոցս ընտանիքդ և թշնամեացն բարեգործեալքդ և կուսպաշտիցս աստուածապաշտքդ, Հաւատացէք ի մանուկդ յայդ, ըստ ընծայից մերոց պատարագաց, երկիր պաղէք իբրև թագաւորի, և փոխանակ ոսկւոյն, մատուցէք պատիւ, և փոխանակ մատուցանելոյ կնդրիի, զհաւատս՝ խոստովանեցարուք զսա Աստուած, եղերուք մատուցանող զմոխ, ըստ Հաւատոցն Նիկոզիմոսի, և մի ըստ զործոցն Կայրիփայ և Անայի. եղերուք Հաւատացեալք զրոյն, զի պարտ է կատարել զրոյն, և մի թերահաւատութեամբ զկատարումն խորհիք իմանալ և երկմտութեամբ զայթազղեալք և զայլս զայթազղեցուցանել, որոց և Տէրն վայս ասէ, որ զայթազղեցուցանէ զմի ի փոքրրկանցս յայսցանէ:

Այլ նախանձաւոր լիբուք մօտաւորքդ Հեռաւորացս, և Հաւատացէք ի մանուկս յայս՝ իբրև յԱստուած, և զարմացէք ընդ աստուածալայելչապէս ծրնունդ սորա: Ի խանձարրոց ևս մեզ զօրութեամբ իւրով զգիտութիւն առաջնորդել մեզ, և մատուցանել նմա պատարագ, ըստ կարգաց, անօրէնութեամբ իւրով: Դուք վատթարագոյն Համարելով զգա, վասն խօսելոյս առն Հիւսան, և մօր զորա կուսի, որդի Հիւսան ասէք, զոր և ճշմարտապէս օրինակէք և ստութեամբ կորնչիք: Ասէք որդի Հիւսան և ոչ Հաւատայք, և զի որդի Հիւսան այնպէս ճարտարապետի, որ առանց արհեստի ձգեալ առանց սեան զկամարս երկնիս, և ի վերայ ջուրց առանց Հիման Հաստատեալ զերկիր:

Աստ ծնաւ զզա մայր զորա կոյս, ի Հարաւ, և առ մեզ յարեելս, ազրիւր անուանեցաւ, ուստի բղիսեալ առանց Հիւթոյ ջուր կենդանութեան, ունելով զձուկն բանաւոր, որ զենանի զենամար կենդանի, և ի մարմնոյ նորա տիկերքս աճենայն կերակրին, և ոսկր նորա մի բեկցի, և իմաստնացուցանէ զձրկնորսս յիմարս, խնուլ զբերանս իմաստնոց ճարտասանից, և Հեռաւորացս և օտարացս այդպէս նշանակ եղև, և իսկոյն Հաւատացաք զհեռաւորութիւն ճանապարհին մերձ առ զրունս Համարելով:

Դուք, որ մերձ առ սեամս կայք, ուստի ձայն աւետեաց հնչեալ տիեզերաց, և զարթոյց զննջեցեալն անհաւատութեամբ, ընդէ՞ր ոչ լուայք՝ և եկիք յերկրպագութիւն, որ առ դրունս մերձ եկեալ եմք, և լուայք զձայն հովուացըն, զոր լուան ի զօրաց երկնաւորաց, որ բարբառեալ՝ և անկ. փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Աստ բարբառեցաւ երգդ այդ երկնային, և առ մեզ սկիզբն առեալ յսել ձայնի այդր անօրէնութեան, խաղաղութիւն և հաճութիւն, և փառս մատուցաք Աստուծոյ ի բարձունս, ուստի զերազանց խոնարհութիւնդ այդ ծագեցաւ, որ է բարձրութիւն խոնարհաց երկրաւորաց վերանայոյ յերկինս, ուստի բարձրեալն խոնարհեցաւ առ պատերազմօղ թշնամիքս և ած խաղաղութիւն ընդ ձայնին, խաղաղութեան պարզես առ մեզ կատարեցաւ, և ի մարդիկ հաճութիւն, և հանդարտք, և թշնամիքս՝ զօրականք պատերազմողին զխաղաղութեան հաւատս դպեցեալք, եղաք խաղաղարարք և որդիք խաղաղութեան, զոր նախ հաճեցաւ ընդ մեզ լինել՝ նախագահս թշնամայն, նախակոչեալք յերկրպագութիւն խաղաղութեան: Երկիր պազաք մանկանս այս նախակոչեցեալքս, և տեսանեմք զառաջին աստուածապաշտք կոչեցեալք լինել ժառանգորդք մերում նախագահութեան, և պատուս առաջին հաւատացելոց հասցուք յետին հաւատացեալքս, փախիցուք յառաջին հաւատացելոց, և պատուեցուք իբրև զառաջին հաւատացեալքն, և դուք յետին ուրացողդ՝ հասանէք պատժոյ յետին ուրացողաց:

Ուստի ծագելոց է հաւատս մեծագոյնս զնալ զկնի հետոց ուրացողաց յառաջագոյից, և ճշմարիտ հաւատացելոց, որ հաւատացին տեսանել զմանուկրս զայս հինաւորց, նորաձեւեալ շաւիղս նոր, և զհնացեալ բնութիւնս նորաչորձեալ ծնընդեամբ, և արարեալ ստինքն կուսական և մայրական, և մայրն պատուօղ կուսութեանն պատուեցաւ, և մայրական պատուով ճշմարիտ կոյս փառաւորեցաւ, ի սրբութիւն կուսութեան մնացեալ, և զօրհնութիւն որդէժրնութեանն ժառանդեալ. և որ ի հասարակաց բնութենէ՝ ի բաց փոխեալ, զի կոյսն առանց առն ծընանի, և կուսութիւնն ոչ ասականի, մի բնութիւն կուսի իբրև կուսութեամբ պարծի, որովայնն զճնունդն պատմէ, և բնութիւնն զկուսութիւնն վերարբեէ: Ճշմարիտ տղայ ծնեալ և դրունք ծնընդեանն փակեալ:

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

(Շար. 7)





ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

* ԵՇ. 1 Մայիս.— Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեաց Տեառն): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Կարգ Ապաշխարողաց»:

— Կարճ դադարէ մը ետք Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիսատար Ս. Պատարագ: Պատարագէ Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճէմեան, որ կարդաց Ս. Բարսեղ Հայրապետի Ս. Հաղորդութեան ճառը: Բազմաթի հաստացեալներ Ս. Հաղորդութիւն ստացան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Ոտնալուայի արտագրաւ արարողութիւնը»: Ներկայ էին բազմաթի օտար հրաւիրեալներ, պետական և կրօնական ղեկավարներ: Լուսցման կարգէն ետք Անկլիքան Արքեպիսկոպոսը զգետաւորուած Աւագ Սեղան բարձրանալով, ըստ սովորութեան, կարդաց Յովհաննու Աւետարանէն Ոտնալուայի մտաբերող համարները: Արարողութիւններէ ձայնասփռուեցան իւրաքանչեւն ուստիկարանէն:

— Ժամը 5ին փոքր թափօր մը, Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Այրազեանի գլխաւորութեամբ, այցելեց Քրիստոսի զոյգ բանտերը — Ս. Հրեշտակապետաց և Ս. Փրկիչի փանքերը: Թէ՛ առաջինին բակին մէջ գտնուող Ս. Զիթենիի ծառին առջև և թէ՛ երկրորդին կիսաբանդ եկեղեցիին մէջ — ուր 1948ի դէպքերէն ի վեր առաջին անգամ ըլլալով արարողութիւն կատարուեցաւ—, Հոգշ. Հայր Սուրբը խօսեցաւ, ընելով նաև հակիրճ պատմականը ազգապատկան զոյգ արբավայրերուն:

— Մայրամուտին՝ Ս. Յակոբեանց Մայր

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Տաճարին մէջ սկսաւ «Խաւարման» կարգը, որ տխրագրեցիկ խորհրդատրութեամբ շարունակուեցաւ աւելի քան չորս ժամեր: Արարողութեան վերջին մասին երբ Տաճարը ըզզեցաւ սուգի խորհրդանիշ խաւարը, քարոզեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր զիս» բնաբանով, հակադրելով Աստուածորդիին գերագանց ներդրամտութիւնը մարդոց անորակելի ամբարշտութեան և վեր հանելով «լացի գիշեր»ուան փրկարար նշանակութիւնը:

* Որ. 2 Մայիս.— Աւագ Ուրբաթ (Յիշատակ Զարչարանաց, Խաչելութեան և Թաղման Տեառն): Կէսօրը քիչ անց՝ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի գլխաւորութեամբ, Ս. Յարութեան Տաճարի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»:

— Ժամը 4.30ին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Թաղման», նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր և ի ներկայութեան խումներամ ժողովուրդի: Եկեղեցիի դասին մէջ զետեղուած էր Քրիստոսի դագաղը խորհրդանշող ասրուածք մը, որուն շուրջ Միաբանութիւնը ծնրադիր և գլխաբաց՝ «Ս. Աստուած»ը երգեց:

* Գշ. 6 Մայիս.— Գ. օր Ս. Զատկի: Մայր Տաճարի Ս. Գլխադիրի մատուռին մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Պոլսէն ուխտատրաբար Երուսաղէմ ժամանած Արժ. Տ. Արսէն Քհնյ. Մեծիկեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ խնդրամատուց ուխտատրներու ննջեցեալներու հոգիներուն համար:

Պ Ա Շ Տ Օ Ն Ս Կ Ս Է Ք

* Շք. 10 Մայիս.— Գլխատումն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցունցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադիրի մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Գեղարդ Արդ. Տառուղարեան:

* Կիր. 11 Մայիս.— Նոր Կիրակի (Յիշատակ բիրատոր նահատակացն մերոց): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատուց Լուսահանը՝ Հոգ2. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարիկեան, որ քարոզեց, նիւթ ունենալով Առաջին Աշխարհամարտի մեր նահատակները, ու հակադրեց ներկայ հայրենիքի պայծառ իրականութիւնը՝ ջարդերու արխնոտ պատկերին: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ մեր նահատակներուն և այլ խնդրամատուց ազգայիններու ննջեցեալներուն համար, նահապահութեամբ Հոգ2 Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի:

* Շք. 17 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:

— Կէսօրէ ետք, Աշխարհամատրան Կիրակիի առիթով, Աւտրալիայէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Աւտրալիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին Եպս. Գազանճեանի գլխատրութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նահատակը՝ Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ տնօրինական սրբատեղիներու այցելութեան հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգ2. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 18 Մայիս.— Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Լուսատրիչ: Ապա, Գերշ. Տ. Գարեգին Եպս. Գազանճեան մատուց օրուան հանդիսատր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ. քարոզեց Փրկչի Յարութեան խորհուրդին շուրջ և Ս. Պատարագէն ետք նահապահեց սրբավայրին առջև կատարուած «Անդատան»ին, որով վերջ գտան զատկական շրջանի հանդիսութիւնները Ս. Յարութեան Տաճարէն ներս:

* Կիր. 25 Մայիս.— Կարմիր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

* Եշ. 1 Մայիս.— Այսօր Ս. Աթոռ վերադարձաւ Ս. Ռիստիս երիտասարդ միաբաններէն Հոգ2. Տ. Վիգէն Վրդ. Այրազեան, որ կը գտնուէր Կ. Պոլիս:

* Բշ. 5 Մայիս.— Ս. Զատկուան տօնին առիթով, կէսօրուան մօտ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր այցելութեան եկան Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչ Տքթ. Ռէօլէն Բական, Քրիստոնէայ համայնքներու Գործոց վերաբերեալ Գրասենեակի պետ՝ Պր. Շմուէլ Թօլէտանօ և Երուսաղէմի Ռատկանապետ Հայնց Պրայթէնֆէլտ:

— Նոյն առիթով Պատրիարքարան այցելեց Քերրոնի Քաղաքապետը՝ Շէյխ Սօհամէտ Ալի Ալ-Շա'պարի:

— Ապա, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ բովանդակ Միաբանութեան, շնորհատրութեան զնաց Յունաց Պատրիարքարան:

* Գշ. 6 Մայիս.— Նոյն առիթով, կէսօրէ առաջ, յաջորդաբար Պատրիարքարան շնորհատրական այցելութեան եկան Յուններու Պատր. Փոխանորդը, Լատիններու Ամեն. Պատրիարքը, Ֆրանչիսկեաններու Գերշ. Կիւսթոտը, Ատրիներու և Հապէշներու Գերշ. Եպիսկոպոսները իրենց Միաբանութեան անդամներով, Պապական Գերշ. Նոտիքալը, Հայ Կաթօյիկներու Մեծատրը, Անկիթքան Արքեպիսկոպոսն ու Արաք Անկիթքան Եպիսկոպոսը, Լուտերականներու և Արաք Լուտերականներու Երէցները և այլ ականատր անձնատրութիւններ:

— Կէսօրին, Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս Աճէմեան, ընկերակցութեամբ Հոգ2. Հայրերու, շնորհատրութեան զնաց Ոտրիներու և Հապէշներու Եպիսկոպոսներուն:

* Դշ. 7 Մայիս.— Կէսօրէ առաջ, նոյն առիթով, քաղաքիս հիւպատոսական կազմը այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Ուր. 16 Մայիս.— Ս. Աթոռ ժամանեց Ս. Ռիստիս միաբան և Աւտրալիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին Եպս. Գազանճեան և մեկնեցաւ Չորեքշաբթի 21 Մայիսին:

* Շք. 17 Մայիս.— Կէսօրէ առաջ, Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս, ընկերակցութեամբ Միաբանութեան անդամներուն, բացուեց կատարեց Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի տարեկան Պազարին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ Գիրքը Արտասահմանի Մեջ Ա. Գ. 98

Շնորհաւորական Նամակ Ն. Ս. Օ. Տ. Տ.
Վազգէն Վեհափառ Կաթողիկոսէն 101

Շնորհաւորական Հեռագիր
Ն. Ս. Պօղոս Զ Պապէն 102

Շնորհաւորական Նամակ
Քէնթրպըրիի Արքեպիսկոպոսէն 102

Ջատկական Տօնակատարութիւնները
Հայ Երուսաղէմի Մեջ 103

Ռումէն Եկեղեցիի Պետ Ն. Ամեն. Ժուստիճիան
Պատրիարք Ս. Երևրից մեջ 106

ԿՐՕՆԱԿԱՆ

Աշխարհամատորան կամ Կանաչ Կիրակի ԱՂԱՆ ՎՐԴ. ՊԱՆԻՕՋԵԱՆ 111

ԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ
Աբու Լալա Մահարի ԱԻԵՏԻՔ ԻՍԱՆԱԿԵԱՆ 114

• • • ԹԳՄ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ 115

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Կարապետ Քհնյ. Վանեցի Ն. ԱՐՔԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 116

Կարապետ Քհնյ. Ոստանցի Ն. ԱՐՔԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 117

ՄԱՍԵՆԱԳՐԱԿԱՆ
Ներքողեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչից Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ 119

Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ
Եկեղեցականք - Բեմականք 125

Պաշտօնականք 126

Բովանդակութիւն 127

C O N T E N T S

EDITORIAL

The Armenian book in the Diaspora	A. K.	98
Congratulatory letter from His Holiness Vazken I		101
Congratulatory cable from His Holiness Pope Paul VI		102
Congratulatory letter from the Archbishop of Canterbury		102
The Easter celebrations		103
Visit of H. Beatitude Justinian, Patriarch of Rumania		106

RELIGION

The Feast of the Church	<i>Rev. Aghan Baliozian</i>	111
-------------------------	-----------------------------	-----

POETRY

Abou'l Ala Mahari	<i>Avedic Isahakian</i>	114
∴	<i>Trans. M. Manoukian</i>	
	<i>M. Manoukian</i>	115

PHILOLOGY

Armenian scribes	<i>Archbp. N. Dzovagan</i>	116
Eulogy for St. Gregory the Illuminator	<i>Ed. A. H. Serjouni</i>	119
Monthly news from the Armenian Patriarchate		125
Contents		128

Yearly subscription: 10 U. S. Dollars

All correspondence should be addressed to:

Ara Kalaydjian, The St. James Press

P. O. Box 14001, Jerusalem — Israel